ԳԻՏԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ապրիլի 3-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտա-գործնական կոնֆերանս՝ նվիրված Հայկական ՍՍՀ սովետների և պետական կառավարման օրգանների կազմակերպման ու գործունեության պրոբլեմներին։ Կոնֆերանսը կազմակերպել էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտը՝ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի և Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ միասին։

Ներածական խոսքով կոնֆերանսը բացեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը։ Կոնֆերանսում զեկուցումներով և հաղորդումներով հանդես եկան մի շարք գիտնականներ։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Վ. Մ. Չիչերովանն զեկուցում կարդաց «Սովետական շինարարության և պետական կառավարման պրոբլեմները Հայկական ՍՍՀ-ում» թեմայով, որը ամփոփեց գիտական արշավախմբի՝ ՀՍՍՀ-ում պետական շինարարության պրակտիկայի մեկ ամ-ից կատարած ուսումնասիրության արդյունքները։ Ինստիտուտի գիտաշխատակից, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Տիխամիրովի հաղորդումը նվիրված էր կառավարչական ապարատի գիտական կազմակերպման հարցերին, իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Վ. Լապտեի հաղորդումը տնտեսական ռեֆորմի իրավական հարցերին։ Իրավաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վ. Ի. Ամոյաբլուկը և իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Պ. Կազիմիրչուկը խոսեցին օրինականության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար սովետների պայքարի և ՀՍՍՀ դեպուտատների գործունեության արդյունավետության սոցիալ-իրավական հետազոտությունների մասին։ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Բեգիյանը հաղորդում տվեց «Հայկական ՍՍՀ սովետները կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում» թեմայով և այլն։

Կոնֆերանսի արդյունքները ամփոփեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի սեկտորի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Թադևոսյանը։

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ու «Գիտելիք» ընկերության քաղաքային կազմակերպության փիլիսոփայության և գիտական կոմունիզմի սեկցիայի միացյալ գիտական նստաշրջանը, որը նվիրված էր Կ. Մարքսի ծննդյան 150-ամյակին։

Նստաշրջանը ներածական խոսքով բաց արեց փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Դ. Ասլանյանը։ Այս տարի, ասաց նա, ամբողջ առաջադեմ մարդկությունը նշում է գիտական կոմունիզմի հիմնադիր, մեծագույն տեսաբան, միջազգային պրոլետարիատի ուսուցիչ և առաջնորդ Կարլ Մարքսի ծննդյան 150-ամյակը։

Գիտական նստաշրջանում կարդացվեցին 3 զեկուցում։ «Կարլ Մարքսը գիտական կոմունիզմի հիմնադիր» թեմայով իր զեկուցման մեջ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ռ. Գ. Վարդանովը անդրադարձավ սոցիալիզմը ուտոպիայից գիտության վերածելու, գիտական կոմունիզմի այնպիսի կարևորագույն սոցիալ-քաղաքական սկզբունքների ձևավորման պրոբլեմներին, ինչպիսին են՝ սոցիալիստական հեղափոխության միջոցով նոր հասարակարգ կառուցելու պրոլետարիատի միսիան, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, անհատի լիակատար ազատագրումը և այլն։

«Կ. Մարքսը և ժամանակակից հասարակագիտությունը» զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Է. Ս. Մարգարյանը։ Նա մանրամասն անդրադարձավ Կ. Մարքսի այն մեծագույն դերին, որ կատարել է հասարակական գիտական մտքի զարգացման, հասարակագիտական և սոցիալ-տնտեսական մտածողության նոր եղանակների մշակման գործում։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտաշխատակից Ռ. Գ. Նավասարդյանը զեկուցում կարդաց «Մարքսը որպես բուրժուական անհատապաշտության քննադատ» թեմայով։